

ՇԱՀՎԵԼՈՒ ՈՐԴԻ  
ՍԱՐՀԱԴԻ  
ՀԱՇՎԵՄԱՏՅԱՆԸ

ԵՐԵՎԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱԳԻՆ՝

Ի

ՍՈՒՅՆ ԳԻՐԸ ՀՐԱՏԱՐԱԳՈՒՄ Է ԻՐԱՆԱԼՅՑ  
ՓԵՆԻԿ ԵՎ ԱՎՈ ՀՈՎՃԱՆՆԵՍԱՆՆԵՐԻ ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ,  
Ի ՀԻՇՅԱԿ ԻՐԵՆՑ ՎԱԳԱՄԵՐՈՒԿ ՈՐԳՈՒ՝  
ՅԱՆԹ ՀՈՎՃԱՆՆԵՍԱՆՆԵՐ



«МАТЕНА ДАРАН»  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ им. МАЦТОЦА  
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ТОРГОВЫЙ ДНЕВНИК  
САРХАТА СЫНА ШАХВЕЛИЯ

Подготовка текста, предисловие и словарь  
Ш. Л. ХАЧИКЯН

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТЮН» НАН РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ЕРЕВАН 1994

ՀՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԻՆ ԱՌՇՆԵՐ  
ՄԱՇՏՈՒ ԱՆՎԱՆ ՀԻՄ ՉԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՏԵՏՈՒՑ

33  
Ը - 24

ՇԱՀՎԵԼՈՒ ՈՐԴԻ ՍԱՐՀԱՂԻ  
ՀԱՇՎԵՄԱՏՅԱՆԸ

Աշխատանքները Շ. Լ. ԽԱՉԻԿՅԱՆԻ

ՀՀ ԳՈՍ ԿՐԻՏԻՐԵՑԻՆԻՆԻ ՀՐԱՏԱՐԱՎՈՂՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1994

2883



Տպագրվում է Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդին առընթեր  
Մ. Մալառոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի՝  
Մասնագետների գիտական խորհրդի առջամբ

«ՏԵՏԵՏԵՏԵՏ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱԿՐԵՒՄ»

ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԽՄՐԱԿՐՈՒԹՅՈՒՆ

- Վ. Ա. Քալաբալանյան, Վ. Ռ. Գրիգորյան (գլխավոր խմբագրի տեղակալ),
- Ե. Լ. Խաչիկյան (գիտական քարտուղար), Խ. Ա. Մուշեղյան,
- Հ. Գ. Փափազյան (գլխավոր խմբագիր)

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր Հ. Գ. Փափազյան

Գիրքը հրատարակության էն նրաշխարհի գրախոսներ՝  
պատմական գիտությունների դոկտոր Հ. Գ. Փափազյանը

և բանասիրական գիտությունների թեկնածու **Ե. Խ. Գևորգյանը** :

Շահվելու որդի Սարգսի հաշվմատայնը (աշխատասիրու-  
Շ 241 թյամբ՝ Ե. Լ. Խաչիկյանի, խմբ.՝ Հ. Գ. Փափազյան.—Եր., Հայաս-  
տանի ԳԱԱ հրատ., 1994.— էջ, 1 թ. Կկ.— (Տնտ. պատմ. վա-  
վերագրեր) Մատենագրարան, Հայաստանի Հանրապետության Կա-  
լարարների խորհրդին առընթեր Մալառոցի անվան հին ձեռագրերի  
ինստիտուտ, Բ).

«Տնտեսական պատմության վավերագրեր» մատենաշարի սույն երկրորդ գրք-  
քով հրատարակվող Հաշվմատայնը բովանդակում է Շահվելու որդի Սարգսի և  
նրա ընտանիքի 1711—18 թթ. ծավալած առևտրական գործունեությունը և հան-  
գիստն է մի կարևոր սկզբնաղբյուր հայ առևտրական կապիտալի հետա-  
դոման համար:

Գիրքը նախատեսված է պատմաբանների և տնտեսագիտների համար:

0603000000  
Շ 703(02)—94 91—82

ԳԳՊ 65.02 (22)

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1994

ՇԱՀՎԵԼՈՒ ՈՐԴԻ ՍԱՐԳՍԻ ՀԱՇՎԵՄԱՏԱԿՆԸ

Ցարենի յարմուտ և բոն ծերգծեր այ  
Բանի այ յորս կողմն սովորան Քուղու...

Կուղ Բաղր օղի

Մինչև 1604—1605 թթ. բռնագողթը հայ խոշայական կապիտալի միջ-  
նարերը Հին Ջուղան էր: Այդ գյուղաքաղաքը իր լայնատարած կապիտալ  
հայտնի էր Ասիայի ու Եվրոպայի վաճառահան կենտրոններին: Իրանի բռնա-  
կալ շահ Աբաս I-ը Արևելյան Հայաստանի շեն նահանգներն անմարզարևակ  
դարձնելու և պարպելու իր հրեշտակոր ծրագիրն իրագործելիս՝ հատուկ պայ-  
մաններ ստեղծեց չուղայեցի և, ընդհանրապես, քաղաքաբնակ հայերի հա-  
մար: Նրանց տեղափոխեց իր նոր մայրաքաղաք Սպահան, հատուկ հողա-  
մաս հատկացրեց չուղայեցիների համար, որոնք կառուցեցին իրենց նոր  
բնակավայրը՝ նոր Ջուղան: XVII դ. 50-ական թթ. այն ավելի ընդարձակվեց  
կից կառուցված նոր թաղամասերով, ուր բնակություն հաստատեցին նա-  
խապես Սպահանում տեղավորված երևանցիները, գասկեցիները, թավրիզե-  
ցիներն ու դաշտեցիները:

Նորչուղայեցիներն աստիճանաբար իրենց ձեռքը վերցրին Իրանի արտա-  
քին առևտրի կարևոր լծակները: Նոր Ջուղայի հաշվական համայնքն ուներ  
կազմակերպչական հզոր մեխանիզմ: Համայնքի ինքնավար մարմինների ղե-  
կավարները համայնքի անունից հարաբերությունների մեջ էին մտնում Իրա-  
նի պետական առաջնորդների, ինչպես նաև այլ երկրների պետական մարմին-  
ների հետ, ստանձնում որոշ պարտավորություններ, կայացնում համաձայ-  
նություններ, ստորագրում պայմանագրեր և այլն:

Նոր Ջուղայի պատմությունը հետազոտող Վարդույան Տեր-Շավհանյանը  
բարձր գնահատելով նրա վաճառականության դերն ու գործունեությունը,  
գրում է. «Համարս վաճառականության չուղայեցից ի բաղում տեղիս քաղա-  
յայտ է և հանդիսացնալ ըստ Մեծութեան մասին: Նա եղև աղբիւրն որ զհա-  
րբստութիւնս գետօրէն զեղեալ նոյժ թ Ջուղայ, որով չուղայեցիք զարձ-  
րակառոյց և զգեղեցիաչեն եկեղեցիս՝ և զթագաւորաւմայն յաւլատանիս և  
զպարանս կառուցանել մարթացան, և եղեն ակնաւորք ի մէջ աշխար-  
հիս...»:

1 Ց. Տեր-Շավհանյանց, Պատմութիւն նոր Ջուղայո որ յնպահան, Ե. Ի, Նոր Ջուղա,  
1880, էջ 157—158:



2. նագորթի որդիներ Հարությունի, Մանուկի և Աղազարի (կազարյանների նախահոր) ուղղաման (օրագիրը) (Մաշտոցի անվան Մատենադարան, կազարյանների արխիվ, Յիթապատանակ № 101, գրք թ 123, վավերագիր 1)<sup>9</sup>։

3. Հարությունի Դավիթ զի նագորթի ուղղաման և իր անտեսական գործունեության մասին նամակների ժողովածուն (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 6240)։

Իսկ 1935 թ. Քաղես Ավգյուրեզյանը սպառել զիտական դեմոստական է տալիս սույն սկզբնաղբյուրի արժեքի, երբ հրատարակության անհրաժեշտության և կարևորության մասին։ Սուրբ անհրաժեշտ ենք գտնում ներկայացնել նրա ձեռնարկին կարծիք այն կարևոր բնագրի վերաբերյալ, որը նա մտադրել է եղել գործնել իր կողմից ձրագրված «Ռեզյումե» ու էջոթեր հայ աստրական կազմադրի պատմությունը մատենագրի առաջին հատորը։

«Նոցա-Մաշտոցի անտարածայանը»

1. «Ռեզյումե» ու էջոթեր հայ աստրական կազմադրի պատմությունը սերիան կազմված է լինելու աստեղծի հատորները, որոնցից յուրաքանչյուրը պարունակելու է ա) բոլորովին նոր, չհրատարակված բնագրեր ու բ) ուսումնասիրություն նմանատիպան պատմության տեսանկյունով։

2. Փեն սերիայի վերնագրում հրատարակված է «հայ աստրական կազմադրի պատմություն» երբ, բայց նրա ավագ փաստերը վերաբերում են թե՛ Մերձագոր Արևելքի ու թե՛ Ռուսաստանի աստեղծության պատմությանը։

3. Սերիայի առաջին հատորը կազմելու է «Նոցա-Մաշտոցի անտարածայանը», որը վերաբերում է 18-րդ դարի առաջին աստեղծություններին։

4. Աշխարհագրորեն նա ընդգրկում է Հոլանդիայի, Ռուսաստանի ու Պարսկաստանի շրջանները՝ Ամստերդամ-Արխանգելսկ-Մոսկովա-Հաշտարիան-Շամախի-Քափիզ-Սոլահան ուղեգծներով։

5. «Նոցա-Մաշտոցի անտարածայանը» ոչ թե Անտարկի կամ խորհրդատու է անտարական գործերի նամար, ինչպես որ է ուսուցիչ «ТОРГОВЕ КИТАЕ»-ն, այլ մի ինչոք անտարկյանի հաղվեմտյան, որում մանրամասն գրանցված են յուր ու կրիկանների (հուանգաշե, անդալաշե, ասու, հայ և այլն) մանրամասն ու աստեղծի հաղվեմտյան պարանքները, գրամներն ու զենքի բազմազանի հիշատակությունը ու հարուստ կամենկառուցումը։

6. Նա մի հաղվալյալտ աղբյուր է աստրական ուղեգծների ուղղություն ու տեղադրյան, անտարական կազմադրի մեծամասն ու շրջանառության, զենքի ու շափերի ուսումնասիրության համար։

7. «Նոցա-Մաշտոցի հաղվեմտյանը» մասամբ լրացուցիչ հատոր է Զարթոնա Աղույեղտ «Յրագրություն» նկատմամբ, որովհետև մինչդեռ Աղույեղի ներկայացնում է հայ աստրական կազմադրի Քափիզ-Երևան-Աղբյուր-Ջիլանիան-Վենետիկ-Ֆրանկֆորտ-Ամստերդամ ուղեգիծը, «Նոցա-Մաշտոցը» տալիս է Ամստերդամ-Արխանգելսկ-Մոսկովա-Հաշտարիան-Շամախի-Քափիզ-Սոլահան ուղեգիծը։

8. «Նոցա-Մաշտոցի հաղվեմտյանը» կարևոր նշանակություն ունի նաև այն պատճառով, որ

- ա) պարունակում է ավելիներ պատմական հայտեր անհաղորդությունների (Պետրոս Գեյլանից և այլն) մասին
- բ) հաղվեմտը սրված են յուրաքանուկ հաղվեմտ նուսերացնումով, որ բոլորովին նոր փուլ է կազմում հայ նուսերացիայի պատմության մեջ և
- գ) բնագիրը Քուլալեցոց բարբառով է, որով նրանաժող աղբյուր է հանդիսանում հայ բարբառագրության ու հայոց լեզվի պատմության համար։

Քաղ.Ավգյուրեզյան  
1935, 22/Մ.

Երևան

(ԳԳԳԱ. ֆ. 393 Ե. Ավգյուրեզյան Քաղ. Գ. II. № 72 ց)

Տ Ե. Լ. Խաչիկյան, Նոր Զուգարի հայ վանականությունը և նրա անտարածանական կազմը Ռուսաստանի հետ XVII—XVIII դարերում, Ե., 1988, էջ 100—120։

4. Եղիա Մաշեզյանի հաղվեմտյանները և նամակները, որոնցից կարևորագույնը 1717—1720 թթ. աստրական գործունեության մասին մանրամասն տեղեկություններ պարունակող հաղվեմտյանն է (պահպանվում է Архив внешней политики России կողմից Մոսկովյան արխիվում, «Ռուսաստանի հարաբերությունները Պարսկաստանի հետ» ֆոնդում)։

Հետագայում կարող են ի հայտ գալ այլազանի բովանդակությամբ զեռես անհայտ նոր մատյաններ ու աստեղծի փաստաթղթեր տարբեր երկրների պետական արխիվներում, զրպաչանցներում։

= \* \*

Վերոհիշյալ մատյաններից առաջինի «հեղինակ» Ծանվելու որդի Մարտազը, 1717 թ. Մոսկովայի մաքսատանը կազմված փաստաթղթերի մեջ հիշատակված վերահիշյալ Մարտա Մազկելն է (Сарат Савельев), որը նույն թվականի ապրիլի 10-ին Արխանգելսկից Մոսկովա էր ժամանել 15 հակ եվրոպական ապրանքներով, նրա հաղվեմտյան մեջ է հասել թերի վիճակում։ Ամբողջական էջեր միտառով կորված, հանված են։ Մատյանը, որ պահպանվում է Մաշտոցի անվան Մատենադարանում 6241 համարի տակ, բաղկացած է 33×22 սմ մեծության 79 թերթերից (ֆարգերից)։ Ընդ որում, 1711 թ. հոկտեմբերից մինչև 1713 թ. հունվարի ընկած ժամանակահատվածի գրանցումները, որոնք ամփոփված են եղել առաջին 6 ֆարգերի մեջ, մեզ չեն հասել։ Գրանցումներն սկսվում են 7-րդ ֆարգից։ Յուրաքանչյուր ֆարգ բաղկացած է մեկ կամ մի քանի մասերից, համագծներից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր համարը՝ կոչված «նումբայ»։ Յուրաքանչյուր համարն էլ ունի իր ենթաֆարգերը՝ պարզաբանող ավյալ համաձի ինչ լինելը, Օրինակ, 47 ֆարգը բաղկացած է 4 համագծներից, որոնցից առաջինը՝ 85 նումբան, ունի հետևյալ վերնագիր-բացատրությունը. «Աստուծով թիվն փոքր ձ (100) սվդան Ա (1)-ումն (1716 թ. հունվարի 15) գրեցի իմ խոր բերած 2 (6) խակ շամախոյ քնար ապրշմին Հաշտարիանայ մինչ ի Մոսկովան և Մոսկովան մինչ ի Արխանգելսկ գոմրով, խալը, քրե զնաց, ինչպես գրած այ, քաթեն այս կամ 16 ֆարգը ունի երկու համագծ՝ 41 «նումբայ» և 42 «նումբայ»։ Արանցից առաջինն ունի հետևյալ վերնագիր-բացատրությունը. «Աստուծով թիվն փոքր ձ (100) սվդան Ա (1)-ումն (1716 թ., հունվարի 15) գրեցի, որ թիվն Ա (97) նիրհան 10 (30)-ումն (1713 թ. մարտի 14) Մոսկովումն իմ խել իմ Մարտազին աղարկած խորդայվաթն, սհաթն, մահուդն, սկիին ծախել էր և իմ վնասը հարհանդի Բարսեղին Մարդամայ կապին տվել էր և խորդայվաթին խալը էր արել, քաթեն այս։

Նշված բոլոր համագծները միմյանցից բաժանված են զուգահեռ զծերով, զրանով իսկ ընդգծելով ավյալ գրանցման բովանդակությունը։ Անտարական բոլոր տիպի գործածությունները գրանցված են զուգահեռ մուտքի (ս-

<sup>9</sup> Այս էջոթերի համաստ թվագրումը գտնում ենք Ա. Գ. Արսևանյանի «Սեփա Կարևուցի պիսեռ» էջոթերի ժողովածուի (Երևան, 1988) առաջաբանի մեջ (տես էջ XXXIII—XXXV)։

մատ) և էլքի (բոսֆոս) սյունակներում<sup>10</sup>։ Ընդ որում, զուգահեռ սյունակների ձախակողմյան մասում միշտ գրվում է պարտքի կամ պահանջի գումարը՝ չուղահայ միջավայրում լայնորեն կիրառվող հայ հին ու միջնադարյան մասնակարգության մեջ տարածված, հայկական առանձնով։ Հաշվեմատյանի դասնորմունքի պարզվում է, որ թումանը դիանից տարանջատելու համար միշտ գրվում էր ստորակետ, օրինակ, 22ՂԳ, ԸԹեճԾՕ դիան։ Հանդիսում են նաև արաբական թվանշաններով դրանցումներ, հատկապես վերջում՝ ամփոփող հասմածների աջակողմյան մասում։

Ինչ վերաբերում է ժամանակագրական տվյալներին, ապա դրանք արբված են չուղահայ առևտրականների միջավայրում քննումված Ազարիա Ջուզայիցու տամարով, որին Սարհազը «Փորթ թիվ» կամ պարզապես «թիվ» է ասում։ Հին հայկական տամարի նման, Ազարիայի տամարի ղեկցում էլ տարին ունի 13 ամիս՝ Եամս, Ադամ, Արամ, Շրաթ, Նախայ, Լամար, Նադար, Քիրայ, Դամայ, Համարայ, Արամ, Ովզան, Ներհան, որոնք բոլորն էլ ունեն 30 օր և Անկեաց ամիս, որն ունի 5 օր։ Ազարիայի տամարով առաջին տարին համընկնում է 1615 թ. մարտի 21-ին և որպեսզի պարզեցնեք որևէ թվական, ապա պետք է նրան դումարել 1615 կամ 1616, կախված այն բանից, թե որ ամիսն ու որ օրն է<sup>11</sup>։

Շահվելու որդի Սարհազի հաշվեմատյանը հետագայում (1739 թ. առաջ) բնկել է Էջմիածին և նրա դատարի էջերը, ինչպես և գրված էջերի ազատ մնացած տարածությունները (հաճախ նաև տողամեջերը), օգտագործվել են կաթողիկոսական կոնդակների սևագրությունների, աստվածաբանական ու բժշկական գանազան նյութերի քննօրինակության համար։ Մատյանի մեջ պահպանվել է այսպիսի մի հիշատակություն։ «Յայս տետրիս միջի կղեալ շարդրիցնալ բանքն են ի Յակոբայ Եամսիսեցույ, որոց սկիբքն է ԹճԶԸ (1739) թվականին մերում, յորում վախճանեցաւ թեքիղդաղի լուսաճողի կաթողիկոսն» (խոսքը Արքայած կրիտադու մասին է)։ Այս հանգամանքը դժվարեցնում է բուն հաշվեմատյանի էջերի վերծանությունը, որն բոտ ինքյան էլ դյուրին չէ, քանի որ ուրիշ վաճառականների համանման գրությունների պես, այս մատյանը ևս շարադրված է չուղահայ բարբառով, որը մեծ շահով տարբերվում է դրական լեզվից և՛ իր քերականությամբ, և՛ իր բառապաշարով (պարսկերեն, ինչպես նաև արաբերեն, թուրքերեն բառ-տերմիններն այստեղ օգտագործված են մեծ շահով և հաճախ՝ աղավաղված ձևերով)։

<sup>10</sup> Քրանցումները կատարված են կրկնակի (double) հաշվապահական սխեման համաձայն, որի տեսարանն է համարվում XV դ. մաթեմատիկոս Լուկա Պարիսոլոյեի Սեպտիմ, Ջենուա կոցցետոն գտնում է, որ այդ սխեման ավելի վաղ է ծագել ու կիրառվել Բուլջ Լոցցետոն ու մի արդյուն չի եղում իր կարծիք հետախնդրել հիմնադրելու համար։ Д-р Л. Луццато, Экономическая исто. ит. Итал., М., 1954, էջ 376—377. Н. П. Соколов, Джаннэ Луццато. Очерки экономической истории Венеции, Падуя, 1954, Jino Luzzato, Studi di storia economica veneziana, Padova, 1954, XI, p. 310. „Срезн в века“, X, 1957, էջ 249.

<sup>11</sup> Աշամանյանի ժինն Տեղեկատվական տնայն գրքից, Ազարիայի, Հայր, Էրէջ և Տաշկա... յօրինելու յապիշտա նուրիանան Դուխալ վանանյուցուր, Յամտուղուր, 1698, Բ. Ե. Բուսմայան, Հայ աստղագրությունն օգտամոթյուն (Հնագույն ժամանակներից մինչև XIX դարի սկիբքը), Երևան, 1954, էջ 163; Նույնի, Անձնան տամարացուց, Երևան, 1965, էջ 38—40; Հովհաննես Տեր-Պավլյան Ջուղայիցու հաշվառումը, աշխատանքություն, Լ. Ա. Կալիպանի և Հ. Գ. Փափազյանի, Երևան, 1984, էջ 68։

Բուն հաշվեմատյանի գրանցումները վերաբերում են 1711—1718 թթ. ընթացքում Սարհազի, մասամբ նաև նրա հոր՝ Եահվելու, և նրանց հետ տրանսական հարաբերություններ հաստատած այլ վաճառականների ծավալած առևտրական գործունեությանը, պարունակելով արժեքավոր տվյալներ Իրանի, Ռուսաստանի և Հոլանդիայի տարբեր քաղաքներում վերոհիշյալ թվականների ընթացքում գնված ու վաճառված ապրանքների, նրանց փոխադրումների համար վճարված ճանապարհածախի, մաքսերի և այլ տուրքերի ու հարկերի հանդեպումների մասին։ Այստեղ բազմաթիվ տեղեկություններ են գրանցված այն մասին, թե ինչ ապրանքներ էին արևելքից արտահանվում Ռուսաստան ու եվրոպական երկրներ և ինչպիսի տնտեսական գործարքներ էին կնքում միմյանց և օտարազգի առևտրականների հետ հայ առևտրականները, ինչպիսի պայմաններով միմյանց դրամ փոխ առխուս և վերցնում և, վերջուպես, ինչ շահ ստանում՝ մասնակցելով միջազգային նշանակություն ունեցող ապրանքափոխանակությանը։

Սարհազը, չուղայիցի հայ վաճառականների մեծագույն մասի նման, առևտուր էր անում ոչ թե իր սեփական դրամադրելով, այլ իր հոր՝ Եահվելու և կրտսեկ եղբոր՝ Խոջամալի հետ համատեղ, ծառայագրվելով չուղայիցի մեծահարուստ երեք խոջաների՝ Օհանի որդիներ Մուրադին ու Հակոբջանին և Մարգարի որդի Հովհաննեսին։ Հաշվեմատյանի մեջ գրանցված է մեկ կողմից Եահվելու և նրա որդիների, մյուս կողմից՝ վերոհիշյալ աղա-պարտների մինչև կնքված պայմանագրի համառոտ բովանդակությունը, որը հետաքրքրական տվյալներ է պարունակում հայ խոջայական վերնախավի և նրանց գրամաղխով առևտրի ասպարեզ մտած գործակատար-վաճառականների փոխհարաբերությունների մասին։

«Հայահան, խոջայ Ոհանի որդիք աղայ պարոն Մուրադին, պարոն Յակոբջան և խոջա Մարգարե որդի Յովհանիսէն Թճ (900) թուման ապասի ես՝ Բանդորի որդի Եահվելիս և ես Եահվելի որդիք Սարհազս և Խոջամալս սարմայեայ վեոինք, որ աստուծով տաններ թուրքարթ բանացաներ։ Ինչ որ բտեղդող ամենանի Տեր Աստուածն շայս պարզելի՝ ՋճԶԵ (675) թումանի շայն վերայ Թճ (900) թումանին սարմայուլն վերոյ մեր աղէք պարոն Մուրադին, պարոն Յակոբջանին, պարոն Յովհանիսին Կինի, ԱճՄՕ (150) թումանի շայն ինձ՝ Բանդորի որդի Եահվելիս լինի, ԿՕ (60) թումանի շայն ինձ՝ Սարհազիս լինի, ԺԵ (15) թումանի շայն ինձ՝ Խոջամալիս լինի։ Տէր Յիսուսն բարի աջողումն տայ. խեղոյ շառն ի ձեռն աստուծոյ այ։ Սարմայէն տվին, մեզ հասով Թճ (900) թումանս<sup>12</sup>։

Այսպիսով, վերոհիշյալ խոջաները Բանդորի որդի Եահվելու և նրա որդիների՝ Սարհազի և Խոջամալի արամադրության տակ են դնում 900 թուման դրամադրուր, այն պայմանով, որ նրանք այդ գումարով Իրանում և Անդրկովկասում գնումներ կատարեն, մեկնեն Ռուսաստան ու Եվրոպա, առևտրական գործունեություն ծավալեն, ստացված շահի 75 տոկոսը պարոններին մատուցելու և 25 տոկոսը միայն իրենց ընտանիքի անդամների մինչ (հեհանք) համամասնությամբ՝ Եահվելուն 16,6 տոկոս, աղալ որդուն՝ Սարհազին 6,8 տոկոս, կրտսեր որդուն՝ Խոջամալին 1,6 տոկոս) բաժանելու պայմանով։

<sup>12</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձև. Ս 6241, էջ 1 ր։

Շահ Հուսեյնի որդե (1694—1722) Իրանում շրջանառության մեջ եղող հիմնական գրամական միավորը արբաս կոչվող արծաթ դրամն էր, որ 200 դրանի համարժեք էր և թումանի 150 մասն էր կազմում: Արբասին պարունակում էր 90—92 հարգի 7,3 գ արծաթ, ուստի մեկ թումանը համարժեք էր 365 գ արծաթին:

Այսպիսով 900 թումանը խոշոր դրամար էր (328,5 կգ արծաթի համարժեքով), որ Շահվելուն և նրա որդիներին հնարավորություն էր տալու մեծաքանակ գնումներ կատարել՝ Ռուսաստան ու Եվրոպա տանելու համար:

Հաջվեմառայանի գրանցումների մեջ հետաքրքրական տվյալներ կան Շահվելու, ինչպես նաև բազմաթիվ այլ հայ և օտարազգի վաճառականների գործունեության մասին, սակայն հիմնականում այն ներկայացնում է հաշվեմատյանի հեղինակ Սարհադի գործունեությունն ամենայն մանրամասնությամբ:

Համառոտ ցույց տանք Սարհադի երթուղին: Ըստ հաշվեմատյանի 1712 թ. օգոստոսի 2-ին (յստ Ազարիալի տոմարի Ղէ թվականի դրամը ամսի 14-ին) անցնելով Շամախիով և նավ բարձրանալով Նիզովոյ նավահանգստում, Սարհադը մասնանում է Աստրախան: Այնուհետև, անցնելով Սարատով և Լոմովկա<sup>13</sup> քաղաքներով, նույն թվականին հասնում է Մոսկվա, այստեղից էլ Ըստապոլովում Աբխազիայի, ապա՝ Ամստերդամ: 1713 թ. փետրվարի 5-ից մինչև 1714 թ. ապրիլի 19-ը Սարհադը մնում է Ամստերդամում, որտեղ վաճառում է իր տարած ապրանքները և գնում մեծ քանակությամբ եվրոպական ապրանքներ:

1714 թ. ապրիլի 19-ին դուրս է գալիս Ամստերդամից և օգոստոսի 6-ին հասնում Աբխազիայի: 1714 թ. օգոստոսի 9-ին լինում է Կուրդդայում և օգոստոսի 14-ին կրկին վերադառնում Աբխազիայի և ապա՝ Մոսկվա 1716 թ. նոյեմբերի 12-ին նրան կրկին դուռում ենք Ամստերդամում: Վերադառնում է Աստրախան և 1717 թ. օգոստոսի 18-ին հասնում Շամախի, որտեղ հանդիպում է իր հորը՝ Շահվելուն: 1717 թ. հոկտեմբերի 17-ին մեկնում է Թավրիզ, իսկ 1718 թ. օգոստոսի 1-ին՝ կրկին Շամախի:

Իր այս շրջագայության ընթացքում մեր վաճառականը հանդիպում է և ստեղծարարական գործարքների մեջ մտնում մի քանի տասնյակ հայ և օտարազգի վաճառականների, պետական պաշտոնյաների և արդյունաբերողների հետ: Հաշվեմատյանի տարրեր էջերում, երբեմն մի քանի անգամ, հիշատակվում են աստիներից Մոսկվայի նահանգապետ Նարիշկինը, կնյազ Վասիլի Դուրդուսկինը, Իվան Պոպովը, Իվան Կորոտկովը, Անդրեյ ժիտկովիչը, Իվան Մուշկիեովը, Դմիտրի Իվանովիչը և օրիշներ: Եվրոպացիներից՝ Գիմար Վան դեր Սթրեբը, Յան Դանսենը, Յոս վան Հոտորկեն, Յոհաննես Կասմաներ, Յոհաննես Անկարիկը, Կոստելիս Ֆիկիները և օրիշներ: Հայերից թավրիզից Արզանի որդի Մելքումբը, աստրախանցի գերծակ էվազը, երևանցիներ

Մեղրուդի որդի Բարսեղը և Հերումի որդի Մկրտումբը, Մարտիրոսի որդի Աղաշանը, Տեր-Պողոսի որդի Մատուրը, Սուքիասի որդի Հարությունը, Թաթևի որդի Մկրտումբը և շատ ուրիշներ:

Հառկապես ուշադրության արժանի է Սարհադի կապը Կիլանենց Սարգսի որդի Պետրոսի կամ, ինչպես ինքն էր իրեն անվանում, Պետրոսի որդի Սարգիս Գիլանենցի հետ, որը հայտնի է որպես 1722 թ. ձևավորված «Հայկական էսկադրոնի» ստեղծող ու քաջարի հրամանատար: Պետրոս Գիլանենցի հաշվեմատյանի մեջ հիշատակված է մի քանի անգամ: Պարզվում է, որ 1713 թ. փետրվարի 26-ին (Նիրհան ժԹ-ին) Սարհադի հայրը Մոսկվայում անհիշատակ որդի Արզանիցից 40 թուման դրամ էր վերցրել, զրա դիմաց գրավական տալով երկու հակա շամախու մետաքս, պայմանով որ 105 օր հետո այդ մետաքսը Ամստերդամում հասնելի Սարհադին, իսկ Սարհադը 40 թումանի պարտքը (իր տոկոսներով) մտքի՝ Գիլանենց Սարգսի որդի Պետրոսին վճարելով 1560 զուլգին: Ըստ այդմ տեղեկություն ենք ստանում, որ Պետրոս Գիլանենցը նույնպես Ռուսաստանի վրայով Հոլանդիա մետաքս արտահանող հայ վաճառականներից էր և Ամստերդամում էր գտնվում 1714 թ. հունիսի 7-ին (աղաճ 21-ին):

Ինչպես և պատեղի էր, Սարհադի և նրա հետ կապված հայ վաճառականների Իրանից արտահանած ապրանքների մեջ կարևորագույն տեղը գրավում էր մետաքսի հումքը:

Մետաքսի հումքի վերաբերյալ հաշվեմատյանի տարրեր հատվածներում գրանցված բոլոր տեղեկությունները համախմբելով ստանում ենք հետևյալ պատկերը: Պարզվում է, որ 1711—1718 թթ. ընթացքում Սարհադի իր հոր՝ Շահվելու և զործերկերների օժանդակությամբ, Իրանից Ռուսաստան և այնուհետև Հոլանդիա է արտահանել ու վաճառել 132 հակ մետաքսի հումք՝ մոտ 16 տոննա ընդհանուր քաշով:

Հաշվեմատյանի տարրեր հատվածներում կան մետաքսի գնումների, փոխադրումների, մաքսատներում վճարված տուրքերի և վաճառքի մասին մի քանի տասնյակ գրանցումներ, որոնք վերաբերում են ընդամենը ինը նվազով Իրանից Ռուսաստան տարված մետաքսի հումքի բնունքին: Ստորև անհրաժեշտ տեղեկություններ ենք տալիս դրանց մասին հերթականությամբ՝ հիմք ընդունելով մետաքսի հումքի հակերի քանակն ու կշիռը:

Սակայն, մինչև բուն թվարկման անցնելը անհրաժեշտ է նշել, որ հաշվեմատյանի շափ ու կշիռ միավորների իրական նշանակությունը պարզելու համար հաղթահարվել են զգալի թմալարություններ: Մեզ հայտնի նորագույն շափազեմական աշխատություններում բացակայում են Սարհադի կողմից օգտագործված մի շարք շափերի մասին անհրաժեշտ տեղեկություններ:

Այս Տարդի հանգամանակից քննությունը թողնելով, մետաքսի հումքի մասին տեղեկություններն ըմբռնելու համար անհրաժեշտ է պարզել շահի լիտր, շամախու լիտր և գիլանի լիտր (ինքը միշտ գրում է սղիտր)՝ կոչվող կշռի միավորների մետրական արժեքները, քանի որ այդ միավորներով են ներկայացված մետաքսի գնումների մասին մեզ հետաքրքրող տվյալները:

Շահի լիտր (մանի շահ) XVIII դարի սկզբին կշռորդ էր 5,8 կգ<sup>14</sup>:

<sup>13</sup> E. A. Паломов, Монетные кланды Азербайджана и Закавказья (Труды общества обследования и изучения Азербайджана, вып. 3), Баку, 1926, էջ 33: նկատի ունենալով այն հանգամանքը, որ Իրանում և Ռուսաստանում կատարված անտարական գործարքների բոլոր հաշվերից հաշվեմատյանում արված են թումանով և գրանով, պարզեցրել համար նպատակահարմար ենք գտել անհրաժեշտության դեպքում, փոխադրի մեջ նշել ավելալ դրամների համարժեք արծաթի կշիռը:

<sup>14</sup> Համասարքը նիմիշ Լոմով քաղաքն է, Պենկայի նահանգում:

Շամախու լիարի մետրական համարժեքն առաջին անգամ որոշվում է Սարճադի գրանցած մի քանի տեղեկություններով. ա) Շամախու 6 հակ մետաքսի հումքը, որի կշիռը եղել է 106 լիար 40 ստիլ<sup>17</sup>, կամ, ինչպես հրևում է հաշվեմատյանի գրանցումից, ռուսական կշիռ միավորներով 50 փուֆ 10 ֆունտ է (տե՛ս հաշվեմատյան, ձև. № 6241, էջ 32ա): Այստեղից դժվար չէ գտնել, որ մեկ լիարը հավասար է 7,7 կգ: բ) 37 հակ շամախու մետաքսի հումքը, որ 622 լիար կշիռ է ունեցել, ռուսական կշիռ միավորներով 292 փուֆ 30 ֆունտ է (կամ 4 տոննա 795 կգ) հաշված (տե՛ս ձև. № 6241, էջ 32ա), ուստի այս անգամ ևս ստացվում է, որ Շամախու մեկ լիարը կշռող է 7,7 կգ-ի:

Գիլանի լիար միավորի մետրական համարժեքը պարզ է դառնում հաշվեմատյանի մի քանի գրանցումներից: Բավարարվենք մեկով. հաշվեմատյանի 18ա էջում ասված է, որ Գիլանում զնած 13 հակ մետաքսի հումքի 25 լիարանոց մի հակը Ամստերդամում վաճառվել է 1971 զուլգենով: Միամասնակ նշված է այդ հակի կիրողական քաշը՝ 276 ֆունտ: Այստեղից էլ պարզվում է, որ Գիլանի մեկ լիարը կշռող է 4,5 կգ-ի<sup>18</sup>:

Մետաքսի կշռաչափերի մետրական համարժեքները պարզելուց հետո մատչելի է դառնում այդ ապրանքի զնամների մասին հաշվեմատյանում ջրբված ամենից կարևոր տեղեկությունների համախմբումն ու մեկնաբանությունը:

1. Մետաքսի հումքի ամենախոշոր առաքումը կատարվել է 1716 թ. հունվարին, Շամախի քաղաքից, Գնվել է 37 հակ մետաքսի հումք 622 լիար կամ 4790 կգ կշռով, ընդ որում 32 հակը լիար կշռով, իսկ 5 հակը՝ 20-ական լիար: Ցուրաբանչուր լիար մետաքսի հումքի զիմաց վճարված դրամի մասին հաշվեմատյանում տեղեկություն չի գրանցված, բայց հայտնի է, որ մինչև Նիզովոյ նավահանգիստ հասցնելուց և ապրանքը նավի վրա բանդելուց հետո մետաքսի հումքի վերոհիշյալ քանակությունը նստել է գնորդի վրա 800 ֆունտն 9845 դրան, որը համարժեք է 292,3 կգ արծաթի: Մանրակրկիտ հաշվումների կատարելուց հետո պարզվում են նաև հետևյալ ուշադրով տվյալները: Այդ ապրանքը Աստրախանից մինչև Արխանգելսկ տեղափոխելու համար ծախսվել է 185 ֆունտն 745 դրան, իսկ Նիզովոյից մինչև Աստրախան և Արխանգելսկից մինչև Ամստերդամ՝ 272 ֆունտն 768 դրան:

Այսպիսով, 622 շամախու լիար (4 տոննա 790 կգ) մետաքսի հումքը Շամախուց մինչև Ամստերդամ հասցնելը նստել է 1258 ֆունտն 8250 դրան կամ յուրաքանչյուր 1 կգ մետաքսի հումքը՝ 2620 դրան (95,6 դ արծաթ):

2. Մետաքսի երկրորդ խոշոր առաքումը կատարվել է 1712 թ. մայիսին, պարսեանկելով 523 շահի լիար ու 34 ստիլ (այսինքն 3 տոննա 33 կգ) կշիռ ունեցող 30 հակ շամախու մետաքս: Տեղեկություն չունենք, թե ինչ է վճարված անմիջական արտադրողին կամ միջնորդ վաճառականին մետաքսի հումքի այդ քանակությունը ձեռք բերելու համար: Բացառված չէ, որ Սարճադը 3 տոննաից ավելի այդ մետաքսի հումքը զնել է անմիջապես Շամախու խա-

նից, որը մեծ շահով մասնակցում էր առևտրական գործարքներին, սերտ կապերի մեջ լինելով հայ խոշորական կապիտալի ներկայացուցիչների հետ: Ստույգ գիտենք, որ Նիզովոյ նավահանգիստ հասնելուց և պահանջվող մաքսային վճարումները կատարելուց հետո, 30 հակ այդ մետաքսի հումքի համար Սարճադը վճարել է 478 ֆունտն 3870 դրան կամ 174,6 կգ արծաթ:

Եւրոպ մեկ տարի հետո՝ 1713 թ. փետրվարի 5-ին, այս մետաքսի հումքից 6 հակը Սարճադի հայրը՝ Շահվելին, վաճառել է Մոսկվայում, իսկ մնացած 24 հակը (420 շահի լիար (2 տոննա 436 կգ) կշռով), եույն թվականի հուլիսի 9-ին ուղարկում է Ամստերդամ, ուր վաճառվում է տարբեր մարդկանց՝ ընդամենը 25587 զուլգեն գումարով<sup>19</sup>:

3. Հաջորդ տեղը գրավում է 1717 թ. օգոստոսին (մինչև Սարճադի Իրան վերադառնալը) 473 ֆունտն 7560 դրան (172,9 կգ արծաթ) գումարով գրեված 26 հակ Շամախու մետաքսի հումքը, որի քաշը եղել է 443 լիար (3 տոննա 411 կգ): Հաշվեմատյանի մեջ տեղեկություն կա այն մասին, թե որքան գումար է վճարված մետաքսի հումքի այս 26 հակը Նիզովոյ նավահանգիստ փոխադրելու համար: Այդ գումարը կազմում է ընդամենը 7 ֆունտն 2030 դրան կամ մետաքսի արծեթի շուրջ 1,5 տոկոսը:

4. Ինչպես արդեն նշվել է, 1712 թ. հունվարին վերոհիշյալ խոշաների հետ պայմանագիր կնքելով, Շահվելին և, հատկապես, նրա որդին՝ Սարճադը, ստացած 900 ֆունտնով ապրանքներ են զնում Ռուսաստան տանելու համար: Գնված ապրանքներից մետաքսի հումքը զատվորում են 132 հակերի մեջ, որոնց շարքում, ըստ արժեքի ու կարևորության, կենտրոնական տեղ է գրավում 13 հակ Գիլանի<sup>20</sup> մետաքսի հումքը, որի 6 հակը 25-ական լիարանոց է, իսկ 7 հակը՝ 20-ական, ընդամենը՝ 290 Գիլանի լիար կամ 1 տոննա 405 կգ:

Այդ քանակության մետաքսի հումքի զիմաց վճարվել է շուրջ 300 ֆունտն դրամ (109,36 կգ արծաթ): Աստրախանից մինչև Արխանգելսկ փոխադրված, մաքս և ալլ վճարումներ ու ծախսեր են կատարվել և շուրջ 60 ֆունտանի շահով (59 ֆունտն 8565 դրան): Աստրախանից մինչև Ամստերդամ ծախսերի գումարը կազմել է 840 զուլգեն 14 ըստակ: Իսկ Ամստերդամում վաճառվել է 21,575 զուլգենով:

5. Հաջորդ առաքումը եղել է 1712 թ. մայիսի 13-ին Սարճադի զնած 7 հակ Շամախու մետաքսի հումքը (55 լիար (423,5 կգ) քաշով), որի զիմաց (մինչև Նիզովոյ փոխադրված և մյուս վճարումների հետ միասին) վճարվել է 52 ֆունտն 8015 դրան (19,2 կգ արծաթ): Հաշվեմատյանի մեջ հասած թերթերի մեջ տվյալներ չեն պահպանվել այս 7 հակ մետաքսի հումքի հետագա փոխադրումների և վաճառքի մասին:

6. 1713 թ. աշնանը Ամստերդամում գտնված ամիսներին, Սարճադը երկու նվազով (նախ 3 հակ, ապա 2 հակ) մետաքսի հումք է ստանում 1312 ֆունտ (637,2 կգ) ընդհանուր կշռով, որ վաճառում է 4394 զուլգեն 15 ըստակով: Հաշվեմատյանում տվյալներ կան այն մասին, որ վերոհիշյալ 5 հակ

<sup>17</sup> Մետաքսի մեկ ստիլը լիարի 1/8-ը մասն է կազմում: Տե՛ս Փ. Մ. Петрышевский, Основы метрологии, СПб, 1849, ч. 1, էջ 457.

<sup>18</sup> Ո՛րքա այդքան է նաև Քավրթի լիարը (Քավրթի մեծ մանր), որն ըստ Փետրոզեհու, կշռող է 11,25 ռուսական ֆունտի, այսինքն 4,5 կգ-ի: Տե՛ս Փ. Մ. Петрышевский, նշվ. աշխ., էջ 388:

<sup>19</sup> Գնեք է նշել, որ զուլգենն այդ ժամանակ 10,633 գ 88 հարգի արծաթ էր: Տե՛ս Փ. Մ. Петрышевский, նշվ. աշխ., ч. II, էջ 63: Գուլգենի 1/20-րդ մասը կոչվում է քրասակ, իսկ հաշվեմատյանում կրճատ քրաս էր կոչվում:

<sup>20</sup> Գիլանը սայխ էր Իրանի մետաքսի ամբողջ արտադրանքի համարը 50 տոկոսը:

մետաքսի հումքի փոխադրման ծախսերն ու մաքսատուրքերը Աստրախանից մինչև Արխանգելսկ կազմել են 21 թուման 5890 դրան, իսկ Արխանգելսկից մինչև Ամստերդամ՝ 325 զուլդեն:

7. 1714 թ. Արխանգելսկում գանձված ժամանակամիջոցում Սարճազը մի քանի նվազով ապրանքներ է ուղարկում Ամստերդամ, իրենց հետ առևտրական տերտ կապի մեջ գտնվող դույլ Քևանի որդի Մարկոսի հասցեով՝ այնուհեղ վաճառելու համար: Այդ առաքումների մեջ կարևոր տեղ են գրավել նաև մետաքսի հումքի բեռները: Մեկ անգամ արտահանվել է 5 հակ շամախու մետաքսի հումք՝ 39 փութ 4,5 ֆունտ (639,8 կգ) կշռով և 146 թուման 4720 դրան (53,4 կգ արծաթ) արծեթով, իսկ մյուս անգամ՝ 6 հակ:

Այս 6 հակի մասին տեղեկություններն անհամեմատ առատ են: Գնել է Սարճազի հայր Շահվելին Շամախում. կշիռն է 106 լիտր 40 սաիլ կամ 50 փութ 10 ֆունտ (այսինքն 823 կգ): Վճարել է (Նիդալոյ նավահանգիստ հասցնելու և նավի վրա բարձելու համար ծախսված զուճարները նույնպես հաշված) 77 թուման 5045 դրան (28,2 կգ արծաթ): Աստրախանից մինչև Արխանգելսկ ճանապարհամասեր (մաքսատուրքերն ու այլ ծախսերը) կազմել են 28 թուման 3640 դրան (10,3 կգ արծաթ): Արխանգելսկից Ամստերդամ ուղարկելու ժամանակ այդ 6 հակի վրա ծախսված զրամի հանրադրմարը կազմել է 135 թուման 6750 դրան<sup>21</sup>:

8. Բացի վերոհիշյալ տվյալներից, հաշվեմատյանի մեջ են մի քանի տեղեկություններ կան ավելի փոքր քանակությամբ մետաքսի հումքի գնումների և առաքումների մասին:

1717 թ. Սարճազը 61 թուման 3100 դրան (22,4 գ արծաթ) վճարելով գնում է 55 լիտր (423,5 կգ) «շաքրաթի» կոշվող յափորակ մետաքսի հումք (3 հակ) և իսկանդարի հետ ուղարկում Ռուսաստան: Տեղեկություն ունենք նաև ոչ թե հակով, այլ «բողջալով» արտահանված մետաքսի հումքի մասին: 1712 թ. հունիսի 6-ին Սարճազը 1 թուման 6965 դրանով գնել է մեկ «բողջա» մետաքսի հումք, որի քաշը կղել է 1 լիտր 29 սաիլ:

Նշենք, որ հաշվեմատյանի մեջ հանդիպում են տվյալներ նաև անտեսական ու կենցաղային այլ մանրամասնությունների մասին: Օրինակ, որքան զրամ է վճարվել բեռնակիրներին ապրանքը նավից իջեցնելու և նավակներով ծովափ փոխադրելու, պահետում պահ տալու և համանման սերկրորդական» նշանակություն ունեցող գործողությունների համար: Հասկանալի է, որ պատմատնտեսագիտական մանրակրկիտ հետազոտություններ կատարելու համար այդ կարգի տեղեկությունները նույնպես հետաքրքրական ու արժեքավոր են:

Ամփոփելով 1711—1718 թթ. Սարճազի ու նրա հոր ջանքերով իրանից Ռուսաստան և Ռուսաստանի վրայով Հովանդիս փոխադրած մետաքսի հումքի մասին հաշվեմատյանում գրանցված տեղեկությունները, ստանում ենք այսպիսի պատկեր: Արտահանվել է 132 հակ մետաքսի հումք 15487 կգ կշռով, որի դիմաց վճարված է ավելի քան 2500 թուման դումար (ավելի քան 910 կգ բարձրորակ արծաթի համարժեք):

<sup>21</sup> Այս տվյալով թերևս կարելի է պարզել Նիդալոյ նավահանգստից մինչև Աստրախան փոխադրվելու հետ կապված ծախսերի շափր, որոնք մասն գրանցում չի կատարված: Վերահիշյալ 135 թուման 6750 դրանից պետք է հանել 77 թուման 5047 դրան + 28 թուման 4640 դրան՝ Մոսկոված 29 թուման 3065 դրանը կլինի Նիդալոյից Աստրախան ծախսված զուճարը:

ՀԱՄԱՐ 1717 թ. Սարճազը 61 թուման 3100 դրան (22,4 գ արծաթ) վճարելով գնում է 55 լիտր (423,5 կգ) «շաքրաթի» կոշվող յափորակ մետաքսի հումք (3 հակ) և իսկանդարի հետ ուղարկում Ռուսաստան: Տեղեկություն ունենք նաև ոչ թե հակով, այլ «բողջալով» արտահանված մետաքսի հումքի մասին: 1712 թ. հունիսի 6-ին Սարճազը 1 թուման 6965 դրանով գնել է մեկ «բողջա» մետաքսի հումք, որի քաշը կղել է 1 լիտր 29 սաիլ:





Ռուսական արքունիքի և նոր Զուզայի ինքնավար մարմինների ղեկավարների միջև 1667 թ. կնքված և հետագա սարխիներին ճշգրտված պայմանագրի նախատեսումներով Իրանից Ռուսաստան ներմուծվող բարձրորակ մետաքսի հումքի (աստրեռն կոչվում է ԱՅՈՒ) յուրաքանչյուր փուլին Աստրախանում գնահատվում էր 20 ա., որից գանձվում էր 5 սոկոս մաքս: Մոսկվայում նույնը գնահատվում էր 30 ա. և նույնպես գանձվում էր 5 սոկոս մաքս, իսկ Արխանգելսկում, մինչև երկրից դուրս բերվելը, նույն մեկ փուլի արժեքը դառնում էր արդեն 40 ա., որից նույնպես գանձվում էր 5 սոկոս մաքս<sup>22</sup>: Ըստ այդմ, բարձրորակ մետաքսի հումքի մեկ փուլը Ռուսաստանի վրայով Աստրախանից մինչև Արխանգելսկ տեղափոխելու ընթացքում արքունի գանձարանը ստանում էր 4 ուրլի 50 կոպեկ մաքս<sup>23</sup>:

Հիմք ունենալով այս տվյալները, հեշտովյամբ կարելի է հաշվել այն գումարը, որ Սարհադն իր գործընկերների հետ միասին վճարել է արքունի գանձարան 1711—1718 թթ. ընթացքում Ռուսաստանի վրայով արտահանած կամ հենց Ռուսաստանում վաճառած մետաքսի հումքի դիմաց:

Հիշենք, որ Ռուսաստանի վրայով Հոլանդիա է արտահանված ընդամենը 14887 կգ կամ 930 փուլ բարձրորակ մետաքս, որն Արխանգելսկում ըստ պարմանագրի վերահիշյալ հրահանգների պետք է գնահատվի 83700 ա. (յուրաքանչյուր փուլը 90 ա. հաշվով), որից գանձված մաքսը կազմելու էր 4185 ա., իսկ Մոսկվայում վաճառված 600 կգ կամ 37,5 փուլ մետաքսի հումքի դիմաց գանձված պետք է լիներ շուրջ 95 ա.: Արքունի գանձարանը, միայն մետաքսի հումքի արտածումից Բանդորյան ընտանիքից ընդամենը գանձած պետք է լիներ 4280 ա. մաքս (մոտ 122 կգ արծաթ)<sup>24</sup>:

Ուշույն արդեն նշել ենք, Ռուսաստան ներմուծվող մետաքսի հումքի մեծագույն մասը նախատեսված էր Արխանգելսկի վրայով Հոլանդիա փոխադրելու համար:

Մետաքսարդյունաբերության ոչ զարգացած վիճակի հետևանքով Ռուսաստանում մետաքսի հումքի մեծ պահանջարկ չկար, և ներմուծվող մետաքսի հումքից Մոսկվայում վաճառվում էր շնչին քանակությամբ:

22 ՏՆ՝ 1667 թ. կնքված Հայաստանի անկախության պայմանագրերը «Армяно-русские отношения в XVIII веке», էջ 62—63, ինչպես նաև 1711 թ. վերանայված պայմանագրերում «Армяно-русские отношения в XVIII веке», էջ 45—49:

23 Ցածրորակ (сардаш կոչվող) մետաքսի մեկ փուլի դիմաց գանձվում էր ընդամենը 3 ա. 10 կ.:

24 Մտավոր զազախար կազմելու համար այս գումարի գեոգրոսկոպիան ժառին նշելք, որ Պետրոս I-ի ժամանակաշրջանում մետաղարդյունաբերական Անտարտիկյաններում աշխատող ուս վարդիանների արեկան աշխատավարձը կազմում էր 20—120 ա., իսկ սեւազոծ բանվորներիը՝ ընդամենը 1ա.—1 ա. 47 կ.: Տերտոլի արդյունաբերության մեջ ուս վաշղեան ստանում էր տարեկան 30 ա.: Մեւիտյան գավառի Զեոնդոլովյան շրջանի բուրգոպակու ֆարրիկայում աշխատող բանվորների վարձատրության վերաբերյալ ունենք հետևյալ տեղեկությանը, որտեղից կարելի էր վարձվում են շարքով կամ անսով, աշխատանքի ժամանակ կրածց սպում է անվին շարքական 10-ական կոպեկ: ՏՆ՝ E. H. Заозерская, Мануфактура при Петре I, М.: Л., 1947, էջ 117—119:

Կան նաև հետաքրքիր տեղեկություններ այդի ուղ ժամանակաշրջանի վերաբերյալ 1734—75 թթ. Ուկրաինայում մին ձեւին հաշվով գնահատվում էր 7—10 ա., կոպը՝ 5—8 ա., ցորենի մեկ լեւովրար՝ 2 ա. 50 կ.—4 ա. 50 կ., մեկ ֆունտ խոտի շարքը՝ 12 կ., հասարակ շապիկը՝ 40 կ. և այլն (աճ՝ B. A. Голобуцкий, Запорожское казачество, Киев, 1957, с. 372: Այս դրբից տեղեկանում ենք, որ բանվորի մեկ տարվա աշխատավարձը մինչև հաշվով կազմում էր 3 ա. 50 կ., իսկ օրական աշխատավարձը 1 կ. (նույն տեղում, էջ 370):



Ռուսաստանում XVIII դարի 10-ական թթ. միայն, Պետրոս I-ի նախա-  
ձեռնությամբ, սկսում են հիմնադրվել մետաքսի ֆաբրիկաներ և այդ գոր-  
ծում ակտիվ մասնակցություն են ցուցաբերում հայ ձեռնարկատերերն ու  
վաճառականները<sup>25</sup>:

XVIII դարի 30—40-ական թթ. Ռուսաստանում, հիմնականում Մոսկ-  
վայում, մանուֆակտուրայի զարգացման կապակցությամբ, մետաքսի հում-  
քի նկատմամբ մեծ պահանջարկ է առաջանում: Մոսկվայի մետաքսարդյու-  
նարեությունը կլանում էր Ռուսաստան ներմուծվող պարսկական զրեթի  
ամբողջ մետաքսի հումքը, որն այդ տարիներին կազմում էր մոտ 3 հազ.  
փուֆ, այսինքն մոտ 50 տոննա<sup>26</sup>:

Անդրադանանքը հաշվեմատյանի այն տվյալներին, որոնք վերաբերում  
են Մոսկվայում վաճառված մետաքսի հումքին:

1712 թ. ներմուծված 30 հազ շամախու մետաքսի հումքից (տես մեր  
Քվարկման երկրորդ համարը) Մոսկվայում, 176 թումանով (64,2 կգ արծաթ),  
վաճառվել է 103 շահի լիտր կամ շուրջ 600 կգ մետաքսի հումք, որը դեղել  
էր 94 թուման գրամարով (34,3 կգ արծաթ): Հայտնի է նաև, որ մեկ շառչաա  
(1 դիտր 29 սաղի կշռով) մետաքսի հումքը, որ դեղվել էր 1 թուման 6965 դիա-  
նով, Մոսկվայում վաճառվել է 3 թումանով:

Այս տվյալները տնտեսագիտական հաշվարկների համար օգտակար  
չլիով կարող են դառնալ միայն այն դեպքում, երբ հնարավոր լինի (Քեկուզ  
մտառվող շափով) պարզել, թե ինչ ծախսեր են կատարված մետաքսի հում-  
քի այդ անսնաքանակի վրա՝ Իրանից Մոսկվա փոխադրելու ընթացքում:

Ցավոք, զրանց փոխադրվածի և հարակից ծախսերի մասին հաշվե-  
մատյանում տվյալներ չեն պահպանվում, ուստի օգտվելու ենք այլ առաջում-  
ների մասին առկա գրանցումներից: Այս առումով հետաքրքրական են մե-  
տաքսի հումքի բեռների առաքման մեր ցանկի առաջին և շարքորդ գրանցում-  
ները, որոնք համաձայն Աստրախանից Արխանգելսկ մետաքսի հումքի փո-  
խադրումների համար, մինչև հաշվով վճարում էին սպրանքի ձեռք բեռման  
համար վճարված գումարի (ազելի ճիշտ՝ մինչև նիզովոյ նավահանգիստը  
տանկելու և նավի վրա բարձելու համար վճարված գումարի) շուրջ 20—22  
տոկոսով<sup>27</sup>:

Վերոհիշյալ երկու օրինակները քննարկելիս պետք է հաշվի առնել, որ  
առաջին դեպքում 600 կգ մետաքսի հումքի դիմաց մեր վաճառականը վճա-  
րել է 94+18,8, այսինքն՝ 112,8 թուման: Ուստի, Մոսկվայում վաճառելով

<sup>25</sup> E. H. Ишодова, О российских мануфактурах второй половине XVIII в., М., 1975, 249—245: Այս աշխատության մեջ կան ուշադրով տեղեկություններ հայ ձեռնարկա-  
տերերի մասին: Բերնեթ մի քանի օրինակ՝ բազմա ռուսական ֆաբրիկաների մեծածախառու-  
ղիկայի տեղեկագրից. դա այդ փաստաթղթի մետաքսի աղբյուրները: Միայն զմեզ Ռուսաստանում  
գրառվել են հետևյալ հայերը. Իգնատի Յրանցով՝ 20 հազ. սուրյի կապիտալով, Մոսկվայում  
Վաղարշապատից՝ 50 հազ. սուրյի կապիտալով, Աստրախանում՝ Պետրոս Վարդանյանը (4660 ա.),  
Ֆեազ Ջախեր (8000 ա.), Առաքել Եսայեր (5000 ա.), Իգնատի Բվանովը (5000 ա.), Ղազար  
ում՝ Սաֆար Վասիլի թողը՝ Վասիլի Խաստատովը (10 հազ. ա.) և էր շուտերը:

<sup>26</sup> E. H. Кушова, Торговая Москва в 30—40-х годах XVIII в., «Исторические за-  
писки», т. 23, М., 1947, с. 70.

<sup>27</sup> Աստրախի մեջ սոված է, որ 800 թումանի արժեզրեքայում 27 հազի փոխադրական  
ծախսեր կազմել են 185 թուման, Կիրորդի (300 թումանի արժեզրեքյան մետաքսի) դեպ-  
քում՝ 60 թուման:

176 թումանով, Սարհադը շահել է ընդամենը 63,2 թուման կամ արժեքի 64  
տոկոսի շափով:

Մյուս տվյալը քննարկելիս պարզվում է, որ մեկ շառչաա մետաքսի  
հումքի դիմաց Սարհադը վճարել է 1 թուման 6965 դիան: 20 տոկոսի հավե-  
լումով (այսինքն ճանապարհածախսը և այլ ծախսերը հաշվի առած) այդ  
գումարն աճում և հասնում է 2 թուման 3500 դիանի: Մոսկվայում վաճառել  
է 3 թումանով, ուստի շահը կազմում է 9650 դիան կամ արժեքի շուրջ 63  
տոկոսը:

Մետաքսի հումքի արտահանության մասին գրանցված տվյալները հի-  
շատակելուց հետո, անհրաժեշտություն է զգացվում համառոտակի անդրա-  
դանալ նաև Իրանից Ռուսաստան արտահանված և հենց այդտեղ վաճառ-  
ված մի քանի այլ ապրանքների մասին հաշվեմատյանում գրանցված տեղե-  
կություններին:

Արևելյան երկրներից Ռուսաստան ներմուծվող ապրանքների մեջ միշտ  
էլ խոնկը որոշակի տեղ է զբաղեցնում: Կավատեղյակ լինելով դրան, Սարհադն իր  
հետ վաճառելու համար Ռուսաստան է ապրել 800 շահի լիտր կամ 23 փուֆ  
15 Ֆունտ (464 կգ) խունկի, Մինչև Նիդովոյ նավահանգիստը հասցնելն ու ևս-  
վի վրա բարձրելն այդ խունկի համար Սարհադը վճարել է 9 թուման 1260  
դիան: Մեկ թուման 7315 դիան էլ կազմել է Աստրախանում վճարված գու-  
մարը (մաքս և ալյու): Այսպիսով, խունկի վրա ծախսվել է ընդամենը 10 թու-  
ման 8575 դիան: Նրան հաջողվում է այդ ապրանքը վաճառել հենց Աստրա-  
խանում, 16 թուման 5125 դիան գումարով, շահելով 5 թուման 7550 դիան,  
որը կազմում է արժեքի մոտ 53 տոկոսը:

Սպահանում և Եամախում կատարված գնումների մեջ իր որոշակի տեղն  
ունի սուրճը: Սպահանում դեռած 32 շահի լիտր և Եամախում դեռած 8 լիտր  
սրճին, մինչև Նիդովոյ տեղափոխման ծախսի հետ միասին, վճարվել է 9  
թուման 950 դիան<sup>28</sup>, 1712 թ. սեպտեմբերի 8-ին կատարված գրանցումներից  
պարզվում է, որ այդ սուրճը Սարհադը Մոսկվայում վաճառել է 14 թուման  
2375 դիանով. ԵժԻ, Բե-ԸՃՃ0 դիան քաֆիա ֆարդ 13 խումբայ 35 Կադար Դ  
(8) ուղան Դ (4) Բ (2) զալամ Ըսպահանյան և Եամախայ առած զահվին ծախս-  
ցի, որ է ԺԿ (11) փուֆ և ԼՆ (35) Ֆունտ, պինս այ՝ ԺԴ, Բե-ԸՃՃ2ն: Ընդ որում,  
Աստրախանից մինչև Սարատով և Սարատովից մինչև Մոսկվա տեղափոխ-  
ման բոլոր ծախսերը, մաքսի հետ միասին, նստել են 3 թուման 4975 դիան<sup>29</sup>:

Իրանից արտահանվող և Ռուսաստանում վաճառվող սպրանքների մեջ  
կարևոր տեղ են զբաղեցնում նաև արմատը, կարմիր հակինթը (ստատի), կա-  
պույտ հակինթը (շափուղա), մարզարիտը, աղիք իր կարմիր ու ձերմակ  
տարաստանակներով, նոռաքորը և այլն: Հաշվեմատյանից տեղեկանում ենք,  
որ Սարհադը Սպահանում վճարելով 7 թուման 9580 դիան, գնել է 2920  
հատ շինկինի կարմիր աղիղ՝ 151 շար սթազրեհի աղիղ՝ և այլ թանկարժեք  
քարեր:

<sup>28</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, Ըն. Մ 6241, էջ 1 ր

<sup>29</sup> Նույն անգամ, էջ 3ա, 6ա:

<sup>30</sup> Նույն անգամ: Ետը կազմում է 1 թուման 6550 դիան Գառիկաբեկու համար գն-  
դանակությունը, անսեղ, որ 1 թուման 1200 դիանով կարելի էր գնել, օրինակ, մի Նույն ան-  
գամ, էջ 33 ր:

Տեղին է նշել, որ ներմուծվող թանկարժեք քարերի զիմաց Ռուսաստանում մաքս չէր գանձվում, և այդ ևս արժույթ էր այն նպաստակով, որ հայ վաճառականները, հրաժարվելով Քուրքիայի վրայով կատարվող առևտրից, գերազանես միջազգային ապրանքափոխանակության աուսական ուղին<sup>31</sup>:

Հաշվենաաայանի 6ա էջի գրանցումից տեղեկանում ենք, որ 11 հազ. հաս ճամբրիչի աղիչ և 2990 հաս մասանու մեջ դնելու արդեն պատրաստ կարմիր աղիղի մի մասը Սարհաղենք վաճառել են Աստրախանում, իսկ մյուս մասը՝ Մոսկվայում, բնօրհանոր հաշվով 17 թուամս 3000 դրան դումարով, շահելով 9 թուամս 3420 դրան: Տվյալ գեպում շահը կազմել է շուրջ 20 տոկոս: Մեկ այլ գրանցումից իմանում ենք, որ ախալցիացիի ոմն էվազ Շահվելուն 2 հաս շափուղա էր ափել, որը Սարհաղը Մոսկվայում վաճառել էր 1 թուամս 2000 դրանով. «...էվազն իմ խոր Բ (2) դանայ կապուլտ ետաղոթ էր ափել, Մոսկովումն ծախեցի, գինն այ՝ Ա (1) թուամս ԲԻ (2000) դրան»<sup>32</sup>:

Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ թանկագին քարերի փոխադրումը մեծածավալ ու մեծ կշիռ ունեցող ապրանքների համեմատ հեշտ էր, ապա պարզ կզատես, թե ինչու հայ վաճառականներին շատերը իրենց առևտրական գործարքերի մեջ կարծր ոտը էին հասկացնում դրան:

Այսպեսով, Իրանից և նրա տիրապետության տակ գտնվող անգրիզվկայան երկրներից Ռուսաստան և Ռուսաստանի վրայով ներդրական երկրներն արտահանվող հիմնական ապրանքատեսակը ամենօրեք մեծ պահանջարկ վաճառող մետաքսի հավթն էր իր տարատեսակներով (շարքաֆի, լեյմսի և քեոք)<sup>33</sup>, Արտահանվում էին նաև բազմապիսի գործվածքներ, օրինակ, գարբաֆ ու կերպաս, դուֆինի և քոլիխա<sup>34</sup>, դիպակ, առլաս, թաֆտա, թավիչ, ինչպես նաև տարբեր տեսակի դիտաշորեր (սքալալաշի աղլուխ), վերձակի երես, բուրդ և այլն: Իրանից արտահանվող ապրանքների մեջ, բացի մետաքսի հումքից և մետաքսյա գործվածքնեղներից, իրենց հաստատուն տեղն ունեին նաև գորգերը, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը, խունկը, սուրճը, լիզակը, ծխախոտը, միրգը, բրինձը, արևելյան համեմունքները և բազմապիսի այլ ապրանքներ:

Ռուսաստանից արտահանվող ապրանքների մեջ գերակշիռ տեղ էին գրավում տարբեր կենդանիների (սամուր, սպիտակ կղաքիս, բենոաղվեն, աղնրվաքիս, ջրասամուր, մանտաքիս, սիլուտ, նապաստակ, կուղը) մորթիները և դրանցից կարված մուշտակներն ու դիտարկները, ինչպես նաև ուսական կաշի, մեղրամոմ, ճերմակ մեղր, մոմ, ստախն, հացահատիկ, պարան, քաթան, խողի մազ, ձղոտի խսիր և այլն:

Ռուսական մորթիների առևտուրը մեծ տեղ է գրավել նաև Բանդորյանների առևտրական գործունեության մեջ: Օրինակ, 1713 թ. մայիսին Մոսկ-

վայում Շահվելին գնում է 5 զուլգ սամուր, 50 «սորուկ», ընդամենը վճարելով 168 թուամս 6050 դրան և իր հետ տանելով Շամախի վաճառել է՝ 197 թուամս 3310 դրանով<sup>35</sup>, Սարհաղը 2650 հաս ճերմակ նապաստակ է գնել, որի համար վճարել է 10 թուամս 6450 դրան<sup>36</sup>, Մի ուրիշ գրանցումից էլ իմանում ենք, որ սամուրի վաճառքից ստացված շահը կազմել է 63 թուամս 420 դրան<sup>37</sup>, Հաշվենաաայանի 39բ էջում կարդում ենք. «...Խանին ծախեցինք Ե (5) տանլուղ սամուր, գինն այ՝ ԻԱ (21) թուամս», «...Խանին ծախեցինք ԺԲ (12) ջուխտ... սամուր, ֆի՝ Ա (1) թուամս ԸԻ (8000) դրան», «...խանին ծախել անք Բ (2) քուրք սամուր, գինն այ՝ Լօ (39) թ[ուամս]» կամ «...Խաղրին ծախել այ Ա (1) տանլուղ բել սամուր գինն այ՝ ԼԾ (35) թուամս», «...Բ (2) դանայ սամուր դոտակն բանդուս բերածն, ծախել այ Ա (1) թուամս 2ԻԲ (6000) դրան» և այլն:

Հաշվենաաայանի գրանցումներից պարզվում է, որ Սարհաղն Ամասերգամից ներմուծել է, ինչպես նաև Ամասերգամում եզած տարիներին իր հորը՝ Շահվելուն, առաքել է բազմաթիվ ապրանքներ: 1713 թ. մարտի 14-ին, օրինակ, Սարհաղը Բանդորյանն Ամասերգամից իր հորն ուղարկում է մաճուղ, ծամաղուց, ասի, մանր-մուր ասարկաներ, որոնք հայրը վաճառում է Մոսկվայում 339 թուամս 4800 դրանով<sup>38</sup>:

Հնդ դրամ, հայանի է, որ 1500 հաս սակին գնել է Ամասերգամում 7982 զուլգին 14 բասակով, իսկ մեկ արկղ մանրուրի համար Արխանդակից մինչև Մոսկվա վճարել է մաքս և տեղափոխելու վարձ ընդամենը՝ 3 թուամս 4770 դրան<sup>39</sup>, 1716 թ. հունվարյան գրանցումներից պարզվում է, որ 1713 թ. հուլիսի 6-ին, Սարհաղի հայրը Աստրախանից հասել է Նիդովոյ նավահանգիստը (հունիսի 20-ին), և մինչև 1715 թ. սեպտեմբերի 17-ը Շամախում վաճառել է Սարհաղի Ամասերգամից ուղարկած ապրանքներից՝ Լրկու հակ նեղ երկրով մահուղ 130 թուամս 5850 դրանով և Նիդովոյից մինչև Շամախի վարձ է ափել 4490 դրան, ինչպես նաև վաճառել է 52 թուամս 8950 դրանով՝ 109, 5 հազուստացու՝ «խեմքն աղբուծով» շալ<sup>40</sup>:

Հուլիսիցից ներմուծվող ապրանքատեսակների մեջ, ինչպես տեսանք, մեծ տեղ ունի մահուղն իր տարատեսակ երանգներով («...3 զաղ սպի, սամանի մահուղ սոփ, աղարկիցի...»<sup>41</sup>, «...Սարգամայ կկած Գ (4) ճոթ մահուղն ծախել այ, 179 1/2 զաղ այ, գինն այ՝ ԻԷ (27) թուամս ԷԻԲԸ (7200) դրան»)<sup>42</sup>:

Բանդորյանները Հուլիսիցից Ռուսաստան և Իրան են ներմուծել մեծ քանակությամբ մանյակ, մանյակն ծաղավեններ, լիթ, շալդեն, այլ թվում գաջված («...իմ խոր բերած Մարգամայ կկած Ա (1) խակ, որ է՝ Խօ (40) թուլ մամիչ շահն ծախել այ ֆի Ա (1) թուամս ԱԻ (1000) դրանով, գինն այ՝

<sup>31</sup> Սենատի 1711 թ. մայիսի 2-ի հրամանագրի մեջ ու միայն վերահաստատված էր հայերին արժամ այդ արտառությանը, այն հատուկ շեշտված, որ սամուրի, մարգարիտի և այլ թանկագին քարերի համար հայ առևտրականները մաքս չեն վճարելու, որպեսզի «հայերին շահարգել աղպիսի ապրանքների ներմուծման գործածու» (ՄԸՅ, Կ. IV, № 2856):

<sup>32</sup> Մարտոսի անվան Մասնակարան, ձև. № 6241, էջ 25 ա:

<sup>33</sup> Մենատրի տարատեսակների մասին տե՛ս Բ. Կոչլիկյան, Հայ-պորտուգալական հարաբերությունները, Ե., 1986, էջ 335:

<sup>34</sup> Քիմիական ալի կերպ կուզել է Կաշին Այզ մասին տե՛ս Լ. Խաչիկյան, Մասիկուտ Զուգալիցու կյանքն ու մասնակարգությունը, Բանբեր Մասնակարանի, 1956, № 3, էջ 78:

<sup>35</sup> Մարտոսի անվան Մասնակարան, ձև. № 6241, էջ 5ա, 6բ:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 26 ա:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 27 ա:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 4 բ:

<sup>39</sup> Նույն տեղում:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 6 բ:

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 14 ա:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 26 ա:

44 թուման<sup>40</sup>, և...Ա (1) խակ պատմայ շալն ծախեցի, որ է՛ Ա (31) թույ, զինն այ, որ է՛ Ա (37) թուման<sup>41</sup>, և...Ժն (15) թույ մամիշ շալ առի, ըստամփի խամար, որ Ա (1) սանդղում դրին<sup>42</sup>, ոսկի, տարբեր շափի և տեսակի ժամացույցներ (և...Ա (1) շնակ, արեկակողմ սճաթ առի, և...Բ (2) սճաթ ...մինն՝ 64 գուլդի լվմ, մինն՝ 45 գուլդի, ջամն այ՝ 109»<sup>43</sup>, Հոլանդիայում Հրատարակված Հայերեն աշխարհացույց (և...Բ (2) դանախ խայն-դար աշխարհացույց առի, զինն այ՝ ԻԳ (24) գուլդի<sup>44</sup>, Հայրուհ ճագարնիկողմ սանդ, նակ զինք, Հատկապես տարբեր շափերի առքճանակներ, հոլանդական ոսկերչական իրեր, Կեկարներ, ճենապակյա թասներ, փաքրիկ ափսուներ, պղնձ սրճադաշներ, տարբեր տեսակի հայելիներ, կողպեքներ, թիթ ծխախոտ (խալանկան), զրոշ արիչներ (օղալում թրաշ), մոմակալներ, դանակներ, անագե զղալներ և պատառաքողներ, կոսմետիկա, կանացի հագուստեղեն, կաշվե ձեռնոցներ, գոտիներ, զուլպա, սաթ, զերմանական սաթե համրիչներ և այլն:

Հաշվեմատյանի տարբեր էջերից կարելի է հետաքրքրական տեղեկություններ քաղել Ինչպե՞ս Շահվելու բնտանիքի, նրանց առևտրական գործընկերների սննդի, հագուստի, տան վարձի, փոխադրավարձի և այլնի վերաբերյալ: Այսպես, օրինակ, Առտրախանից մինչև Սարատով ոսեկից, դրասին արվող վարձի, ողորմության, տան վարձի, զինվորի հագուստացուի համար արվող վարձի հետ միասին ծախքը կազմել է 4 թուման 3875 դրան<sup>45</sup>: Իսկ Սարատովից մինչև Մոսկվա կազմել է 3 թուման 1835 դրան. և...Սարայ-թովու մինչև Մոսկովի խորաք, մուշտակի մեջ և չուփայտք թրե զնաց մինչ ի Լոմովցայ և Լոմովցայ մինչ ի Մոսկովն ժԱ (11) դալամ խալը զնաց Գ, ԱնԻԸՆԻ (3 թուման 1835 դրան)<sup>46</sup>: Արխանգելսկիում եղած ժամանակ սնունդը, տան վարձը նստել է 6 թուման 6800 դրան. և...Արխանգելսկի մինչ ի վերկայն խորաքի, տան թրե, շալնի լրթել<sup>47</sup> 1713 թ. ապրիլի 1-ի գրանցումից պարզվում է, որ Սարճաղն Ամստերդամում 14 ամիս 20 օրվա համար հագուստի, սննդի, տան վարձի վրա ծախսել է 578 զուլդեն 6 ըստակ<sup>48</sup>: Այդ նույն ժամանակահատվածի վերաբերյալ (1713 թ. ապրիլի 1-ից մինչև 1714 թ. հունիսի 5-ը) կա մի ուրիշ, առավել ամբողջական գրանցում. «...Մինվն փոքր ՂԲ (98) շամս Ժօ (10)-էն մինչ ի Միխիլ փոքր ՂԲ շրաթ Ին, մինչև ի Սարճամայ վերկայն իւճ խորաքի, փուշակի, ողորմոյթիցոցն, տան թրե, սանդղոցին և ըստը խալը զնաց<sup>49</sup>: Մատյանի 7ր էջից էլ տեղեկանում ենք, որ Շահվելին նիդալոյում 1713 թ. հունիսի 20-ից մինչև 1715 թ. օգոստոսի 18-ը Շամախի մեկնող շրտ հոգու սննդի, հագուստի վրա ծախսել է՝

43 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 6241, էջ 36տ:

44 Նույն տեղում, էջ 40 ա:

45 Նույն տեղում, էջ 11 ա:

46 Նույն տեղում, էջ 23 ա:

47 Նույն տեղում, էջ 17 ա:

48 Նույն տեղում, էջ 2 ր:

49 Նույն տեղում:

50 Նույն տեղում, էջ 25 ա:

51 Նույն տեղում, էջ 9 ր:

52 Նույն տեղում, էջ 24 ր:

21 թուման 3780 դրան: Այս տիպի գրանցումները մատչանում բիշ շեն և կարող են հատուկ հետաքրքրության նյութ գտանալ:

Տեսնելով Բանդորյան բնտանիքի ակտով մասնակցությունը Կասպ-Վոլգայն միջազգային ուղիով տեղի ունեցող ապրանքափոխանակության մեջ, հիշենք, որ Սարճաղն իր հոր, եղբոր և իր հետ ստեղծելուս ունեցող ուրիշ հայ վաճառականների նման շահույթի մի շնչին մասի տերն էր միայն, հանդեսանալով Ապահանում նստած մեծահարուստ խոջաների՝ աշխարհի տարբեր ծայրերում առևտուր անող ինքնուրույն դրամադրիցի զուրկ գործակատարներից մեկը: Ստացված ողջ շահույթի 75 տոկոսը պատկանում էր այդ խոջաներին և 25 տոկոսը միայն՝ Բանդորյան բնտանիքի անդամներին՝ Շահվելուն, Սարճաղին և Խոջամալին (որից Սարճաղի բաժինը կազմում էր ընդամենը 6,8 տոկոս):

